

Ամոֆոս



Ամոֆոսը ($NH_4H_2PO_4$) բարձր էֆեկտիվություն ունեցող գրանուլացված, սպիտակա-մոխրագույն կոմպլեքս ազոտա-ֆոսֆորական պարարտանյութ է, որի ազդող նյութերի ընդհանուր պարունակությունը հասնում է մինչև 64 %, այդ թվում ազոտ 11-12 %, ֆոսֆոր 46-52%: Ամոֆոսի մեջ ֆոսֆորը գտնվում է ջրալուծ վիճակում և հեշտությամբ յուրացվում է բույսի կողմից, բոլոր տիպի հողերում: Օժտված է լավ ֆիզիկա-քիմիական և մեխանիկական հատկություններով, հիգրոսկոպիկություն չունի, չի փոշիանում: Ամոֆոսը հաջողությամբ կիրառվում է և՛ հիմնական, և՛ նախացանքային պարարտացման

տակ, տարբեր գյուղատնտեսական կուլտուրաների ցանքսերում, բոլոր հողակլիմայական պայմաններում:

Պարարտանյութը լայն կիրառվում է նաև փակ գրունտի պայմաններում, ազոտական և կալիումական պարարտանյութերի հետ համատեղ: Այն օգտագործում են գարնանացան հացահատիկի, հատիկաընդեղենների, եգիպտացորենի, արևածաղկի և հլածուկի մշակության ժամանակ: Կախված վարելահողի վերին շերտի շարժում ֆոսֆորով ապահովածության աստիճանից, ամոֆոսի կիրառման նորման կազմում է 60-90 կգ/հա՝ ազդող նյութի հաշվով կամ 120-180 կգ/հա՝ ֆիզիկական քաշով: Բացի այդ ամոֆոսի մեջ պարունակվող ֆոսֆատները, իրենց բարձր հետազդեցության շնորհիվ, շոշափելի նպաստում են գարնանացան կուլտուրաներից հետո մշակվող աշնանացան ցորենի բերքատվության բարձրացմանը:

Ամոֆոսը նպաստում է.

- մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը,
- բույսի արմատային համակարգի զարգացմանը,
- երաշտի և հիվանդությունների նկատմամբ բույսերի դիմացկունության բարձրացմանը,
- բուսաբուծական մթերքների որակական ցուցանիշների բարձրացմանը: